

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզ Աբովյան համայնքի
2026 թվականի
բնապահպանական ծրագրի

Համաձայնեցված է
ՀՀ Շրջակա միջավայրի նախարար
(լիազոր մարմնի անվանումը)
_____ Հ.Սիմիդյան
(ստորագրությունը, անունը, ազգանունը)
«_____» _____ 2025թ.

Համաձայնեցված է
ՀՀ Առողջապահության նախարար
(լիազոր մարմնի անվանումը)
_____ Ա.Ավանեսյան
(ստորագրությունը, անունը, ազգանունը)
«_____» _____ 2025թ.

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԾՐԱԳԻՐ

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԴԱՅՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

1.	Ծրագիրը իրականացնող համայնքը	Արովյան համայնք
2.	Համայնքի ղեկավարի տվյալներ	Էդուարդ Բաբայան (0222) 2-03-65, (060) 447-000 abovyan.kotayq@mta.gov.am
3.	Տնտեսական զարգացման պատասխանատուի տվյալներ	Մերուժան Մելիքսեթյան 093733007 abovyan-zargacum@mail.ru
4.	Ծրագրի անվանում	1. Արովյան համայնքի տարածքում ծառատունկի իրականացում 2. Արովյան համայնքի «Ռ. Հարությունյանի անվան բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը 12 ալիքանի էլեկտրասրտագրական (ԷՍԳ) սարքի ձեռք բերում, մեզի անալիզատոր սարքի ձեռք բերում 3. « Արովյանի ծննդատուն» ՊՓԲԸ համակարգչի ձեռք բերում, 12 ալիքանի էլեկտրասրտագրական (ԷՍԳ) սարքի ձեռք բերում, ներարկիչի ինֆուզումատ սարքի ձեռք բերում

5.	Ծրագրի նպատակը և խնդիրները	1/Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել Աբովյան համայնքի էկոլոգիական վիճակը՝ իրականացնելով մեծ ծավալի ծառատունկ: Ծրագիրն ուղղված է համայնքի կանաչապատման ծավալի ավելացմանը, օդի մաքրության ու կենսաբազմազանության ապահովմանը՝ խթանելով համայնքի բնակիչների մասնակցությունն ու էկոլոգիական գիտակցության մակարդակի բարձրացումը: Ծրագրի նպատակն է նվազեցնել օդի աղտոտվածությունը, բարձրացնել թթվածնի մակարդակը և բարելավել ընդհանուր էկոլոգիական պայմանները: Ծրագրի միջոցով նպատակ ունենք ստեղծել ավելի հարմարավետ և էսթետիկ միջավայր՝ հանգստի գոտիների ձևավորման և կանաչ գոտիների ընդլայնման միջոցով: Տրանսպորտային միջոցներից և արդյունաբերական գործունեությունից առաջացող աղտոտվածությունը կառավարելու նպատակով պահանջվում է բնական ֆիլտրերի կիրառում: Ծրագրի շահառուներն են Աբովյան համայնքի թվով 92 774 բնակիչները, որից Աբովյան քաղաքի տարածքում բնակվում է շուրջ 62 345 մարդ: Նպատակին հասնելու միջոց է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում նշված Աբովյան համայնքի տարածքում գործունեություն ծավալող ընկերությունների հարկերից մասհանված ֆինանսական միջոցների ներգրավվումը: Ծրագրի կազմման համար գործիքակազմ է հանդիսացել համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը և որդեգրած ռազմավարությունը, ՏԱՊ-ը, Աբովյան համայնքի ղեկավարի լիազորությունները շրջակա միջավայրի պահպանության բնագավառում, ինչպես նաև ծրագրի ընտրության և նպատակների սահմանման հարցում ներգրավված են եղել համայնքի բնակիչները: 2/Էլեկտրասրտագրական (ԷՍԳ) սարքերի ձեռք բերման հիմնական նպատակը սրտի էլեկտրական ակտիվության գնահատումն է՝ ապահովելով հիվանդների սրտաբանական վիճակի արագ և ճշգրիտ ախտորոշում, կանխարգելում և մոնիթորինգ: Աբովյանի «Ռ. Հարությունյանի անվան բժշկական
----	----------------------------	--

	կենտրոն» ՓԲԸ և « Արուվյանի ծննդատուն» ՊՓԲԸ ԷՍԳ սարքերի ձեռք բերումը կնպաստի խոշորացված համայնքի 92 774 բնակչության առողջության կենսամակարդակի բարձրացմանը: Առողջապահական կարիքների լուծման համար բնակչությունը կարող է համայնքի տարածքում ստանալ անհրաժեշտ հետազոտություն: Էլեկտրասրտագրական (ԷՍԳ) սարքերի ձեռք բերումը նպաստում է սրտի ռիթմի խանգարումների վաղ հայտնաբերմանը, ինֆարկտի, իշեմիկ հիվանդությունների և այլ սրտային խնդիրների ճիշտ ախտորոշմանը, սրտային բարդությունների կանխարգելմանը՝ վաղ միջամտության հնարավորությամբ, բուժման ընթացքի արդյունավետ գնահատմանը: ԷՍԳ սարքի ներդրումն ուղղված է հետևյալ խնդիրների լուծմանը՝ ախտորոշման գործընթացի բարելավում, բուժանձնակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացում, հիվանդի անվտանգության և կյանքի որակի բարձրացում, բուժհաստատության տեխնիկական հագեցվածության բարելավում, դիտարկման և մոնիթորինգի հնարավորություն: 3/Համակարգիչը տեխնիկական սարք է, որն օգտագործվում է տեղեկությունների մշակման, պահպանումի, հաշվարկման, հաղորդակցման և այլ բազմազան նպատակներով: Այն հնարավորություն է տալիս արագ և ճշգրիտ աշխատանքներ կատարել բազմաթիվ ոլորտներում՝ սկսած գիտությունից ու տեխնոլոգիայից մինչև արվեստ և տարաբնույթ գործնական խնդիրներ: Համակարգիչների նպատակները առողջապահության ոլորտում՝ 1. Տվյալների պահպանում և կառավարում 2. Արագ և ճշգրիտ ախտորոշում 3. Հիվանդների մոնիթորինգ և վերահսկում 4. Ավտոմատացում և արդյունավետության բարձրացում 5. Հեռաբժշկություն և հեռակառավարում
--	---

	6. Բժշկական հետազոտություններ և կրթություն 4/ Ներարկիչի ինֆուզումատը բժշկական էլեկտրոնային սարք է, որը նախատեսված է հեղուկ դեղորայքի, սննդարար նյութերի կամ այլ նյութերի՝ ճշգրիտ չափաբաժնով և վերահսկելի արագությամբ ներարկման համար՝ հիմնականում ներերակային, ենթամաշկային կամ այլ ձևով: 1 Դեղամիջոցի ճշգրիտ և վերահսկելի մատակարարում 2 Շարունակական կամ ընդհատվող ներարկման ապահովում 3 Անվտանգության բարձր մակարդակ հիվանդի համար 4 Օգտագործման հարմարություն բուժանձնակազմի համար Ներարկիչի ինֆուզումատը առողջապահության ոլորտում կարևոր սարք է, որը հնարավորություն է տալիս ապահովել բարձր ճշգրտությամբ դեղորայքի մատակարարում: Չնայած որոշ տեխնիկական և գործառնական խնդիրներին, այն զգալիորեն նվազեցնում է սխալների ռիսկը և բարձրացնում է հիվանդի անվտանգության մակարդակը: 5/ Մեզի (միզահետազոտության) անալիզատորը նախատեսված է մեզի նմուշների ավտոմատացված վերլուծության համար: Մեզի անալիզատորի նպատակները՝ 1.Ապահովել արագ և ճշգրիտ ախտորոշում 2. Աշխատանքային արդյունավետության բարձրացում 3. Անձնակազմի ժամանակի խնայողություն 4. Սխալների նվազեցում 5. Մեծ քանակությամբ նմուշների մշակում
--	--

		6. Տվյալների ավտոմատ գրանցում և պահպանում 7. Միկրոսկոպիկ բաղադրիչների հայտնաբերում 8. Կալիբրացիա և վերահսկողություն
--	--	--

6.	Ծրագրի ընդլայնված նկարագրություն	1/Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել Աբովյան համայնքի էկոլոգիական վիճակը, ընդլայնել կանաչ տարածքները, նպաստել օդի մաքրմանը, համայնքի բնապահպանական կայուն զարգացմանը, ինչպես նաև բարձրացնել բնակիչների բնապահպանական գիտակցությունը: Աբովյան քաղաքում, ինչպես Հայաստանի այլ բնակավայրերում, վերջին տարիներին նկատվում է կանաչ տարածքների նվազում՝ կառուցապատման և կլիմայական փոփոխությունների հետևանքով: Ծառատունկի միջոցով հնարավոր է մեղմել այդ բացասական հետևանքները՝ վերականգնելով բնության բալանսը, նպաստելով տեղային բուսականության զարգացմանն ու համայնքի կանաչապատման բարելավմանը: Ծառատունկի համար կընտրվեն կլիմայական պայմաններին համապատասխան, մթնոլորտային աղտոտվածությանը դիմացկուն ծառատեսակներ: Ծառատունկը կիրականացվի «Աբովյան համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների կողմից: ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1. Ծառատեսակների ընտրություն՝ ըստ տեղանքի բնապահպանական առանձնահատկությունների 2. Ընտրված տարածքների նախապատրաստում 3. Ծառատունկի իրականացման աշխատանքների պլանավորում և իրականացում Ոռոգման և խնամքի ապահովում 4. Մշտադիտարկման և գնահատման համակարգի ներդրում 5. Բնակիչների իրազեկման և մասնակցության խթանում 2/Էլեկտրասրտագրական (ԷՍԳ) սարքը բժշկական գործիք է, որը նախատեսված է սրտի էլեկտրական ակտիվության գրանցման և վերլուծության համար: Այս սարքը հնարավորություն է տալիս բժիշկներին գնահատել սրտի աշխատանքը՝ պարզելով պացիենտի սրտի ռիթմի, էլեկտրական գործընթացների և հնարավոր արատների մասին տվյալներ: ԷՍԳ սարքը մի քանի էլեկտրոդի միջոցով
----	--	---

	գրանցում է սրտի ակտիվությունը, որը համարվում է կարևոր տվյալների աղբյուր տարբեր սրտային հիվանդությունների ախտորոշման համար: 12 ալիքանի ԷՍԳ սարքը 8 դյույմանոց գունավոր սարք է՝ սենսորային էկրանով: Նախատեսված է սրտի էլեկտրական ակտիվության բարձր ճշգրտության գրանցման և վերլուծության համար: Սարքը հագեցված է թվային ֆիլտրերով, մեծ հիշողությամբ (10,000 ԷՍԳ հետազոտության պահպանում), ինչպես նաև տարբեր միացման և հաղորդման հնարավորություններով: 3/Համակարգիչը առողջապահության ոլորտում հանդիսանում է կարևորագույն գործիք՝ բժշկական ծառայությունների մատուցման որակը բարձրացնելու, աշխատանքային գործընթացները ավտոմատացնելու և տվյալների արդյունավետ կառավարում իրականացնելու համար: Առողջապահության ոլորտում համակարգիչը մի սարք է, որը օգտագործվում է հիվանդների վերաբերյալ տվյալների հավաքման, պահպանման, մշակման, վերլուծության և փոխանցման համար: Համակարգիչը առողջապահության ոլորտում վերափոխում է բժշկության կազմակերպումը և մատուցումը՝ դարձնելով այն ավելի արագ, ճշգրիտ և արդյունավետ: 4/Ներարկիչի ինֆուզոմատ սարքը բաղկացած է հիմնականում հետևյալ մասերից՝ 1. Սիրինգային հարթակ տեղադրվում է ներարկիչը 2. Մոտոր որը դանդաղորեն սեղմում է ներարկիչը՝ ապահովելով դեղամիջոցի ճշգրիտ մատակարարում 3. Էկրան՝ ցուցադրում է արագությունը, ծավալը և ժամանակը 4. Ծանուցման և ահազանգման համակարգեր՝ ձայնային և տեսողական ազդանշաններ սխալների դեպքում 5. Էլեկտրամատակարարման աղբյուր՝ աշխատում է հոսանքով կամ մարտկոցով Ներարկիչի ինֆուզոմատը բարձր ճշգրտությամբ սարք է, որն ապահովում է դեղերի անվտանգ և արդյունավետ մատակարարում: Այն բժշկական հաստատություններում այսօր համարվում է
--	--

		անփոխարինելի, հատկապես այն դեպքերում, երբ անհրաժեշտ է դեղամիջոցների մշտական հսկողություն և ճշգրտություն: 5/ Մեզի անալիզատորը ավտոմատացված լաբորատոր սարք է, որը նախատեսված է մեզի նմուշների քիմիական, ֆիզիկական և միկրոսկոպիկ հատկությունների վերլուծության համար: Այն ապահովում է արագ, ճշգրիտ և վերարտադրելի արդյունքներ՝ էականորեն հեշտացնելով միզամուղ համակարգի հիվանդությունների, նյութափոխանակային խանգարումների և այլ ախտաբանական վիճակների ախտորոշումը: Մեզի անալիզատորներն ունեն ինտեգրված միկրոսկոպիկ վերլուծության մոդուլ, որը տեսապատկերների միջոցով իրականացնում է մասնակի կամ լրիվ վերլուծություն: Մեզի անալիզատորը կարևոր ներդրում է ժամանակակից լաբորատոր դիագնոստիկայում: Այն ապահովում է ոչ միայն աշխատանքային հոսքի օպտիմալացում և տվյալների ստանդարտացում, այլև՝ բժշկական որոշումների ընդունման համար կարևոր տեղեկատվության արագ տրամադրում: Մեզի անալիզատորները չափազանց կարևոր դեր ունեն պոլիկլինիկաներում և հիվանդանոցներում, դիագնոստիկ լաբորատորիաներում, էնդոկրինոլոգիայի, նեֆրոլոգիայի, ուրոլոգիայի բաժիններում:
7.		

8.	Ակնկալվող արդյունքներ	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ❖ Տնկել Կելրեյթերիա հուրանավոր և Ակացիա ծառատեսակներ ❖ Տնկվող ծառերի քանակը՝ 250 հատ ❖ Ծառատունկն ընդգրկելու է 4020 ք.մ տարածք ԷՄԳ սարքի ձեռք բերման շրջանակներում նախատեսվում է՝ ❖ Սրտի ռիթմի խանգարումների հայտնաբերում ❖ Սրտի ինֆարկտի կամ իշեմիայի վաղ հայտնաբերում ❖ Բլոկադաների և հաղորդիչ խանգարումների հայտնաբերում ❖ Հիպերտոնիայի և այլ հիվանդությունների հայտնաբերում ❖ Բուժման գործընթացի գնահատում Համակարգիչի ակնկալվող արդյունքները՝ 1. Բուժօգնության որակի բարձրացում 2. Տվյալների արդյունավետ կառավարում 3. Միավորների նվազեցում 4. Արդյունավետություն և ժամանակի խնայողություն 5. Հետազոտությունների և նորարարության խթանում
----	-----------------------	--

	Ներարկիչի ինֆուզոմատի ակնկալվող արդյունքները 1. Դեղորայքի ճշգրիտ և վերահսկվող ներարկում 2. Հիվանդի անվտանգության մակարդակի բարձրացում 3. Բուժման որակի բարելավում 4. Բուժանձնակազմի աշխատանքի օպտիմալացում 5. Տվյալների գրանցման և վերահսկման ավտոմատացում 6. Տեխնոլոգիական առաջընթացի խթանում Մեզի անալիզատորի ակնկալվող արդյունքները 1. Բուժառայությունների որակի բարձրացում 2. Աշխատանքային հզորության մեծացում 3. Ավտոմատացում և մարդկային սխալների նվազեցում 4. Տվյալների թվայնացում և պահպանում 5. Ծախսերի կրճատում երկարաժամկետ հեռանկարում 6. Արժեքավոր աջակցություն հանրային առողջության ծրագրերում ☒ Կարճաժամկետ արդյունքներ (0-1 տարի) 1. Կանաչապատ տարածքների ակնհայտ ընդլայնում 2. Բնակիչների ներգրավվածություն և ակտիվ մասնակցություն
--	---

	3. Բնապահպանական գիտակցության բարձրացում 4. Էսթետիկ տեսքի բարելավում Կարճաժամկետ արդյունքներ ԷՄԳ (օրվա ընթացքում կամ մի քանի ժամվա մեջ) 1. Սրտի ռիթմի անմիջապես հայտնաբերում 2. Սրտի ինֆարկտի (կաթված) ախտորոշում 3. Բլոկադաների հայտնաբերում 4. Սրտի հետ կապված սուր վիճակների մոնիթորինգ Համակարգիչների ներդրման արդյունքում կարճաժամկետ (մոտ ապագայի) ակնկալվող արդյունքներն են՝ 1. Բուժսպասարկման արագացման բարելավում 2. Բժշկական սխալների կրճատում 3. Տվյալների թվայնացում և կենտրոնացում 4. Հեռավար խորհրդատվությունների իրականացում 5. Վարչական գործընթացների ավտոմատացում Ներարկիչի ինֆուզոմատի կարճաժամկետ արդյունքները
--	--

	1. Դեղորայքի մատակարարման ճշգրտություն 2. Հիվանդի վիճակի կայունացում 3. Բուժքույրերի և բժշկի աշխատանքի թեթևացում 4. Ժամանակի խնայողություն 5. Տվյալների գրանցման հեշտացում 6. Միսալների վաղ հայտնաբերում Մեզի անալիզատորի կարճաժամկետ արդյունքները 1. Արագ և ճշգրիտ հետազոտության ապահովում 2. Հետազոտությունների քանակի ավելացում օրական 3. Աշխատանքային ծանրաբեռնվածության նվազեցում 4. Մարդկային սխալների կրճատում 5. Արդյունքների թվայնացում և պահպանում 6. Ծառայության մատուցման որակի բարձրացում  Երկարաժամկետ արդյունքներ (1-10 տարի) 1. Օդի և մթնոլորտի որակի բարելավում 2. Քաղաքի միկրոկլիմայի կայունացում 3. Հողի էրոզիայի նվազեցում և կենսաբազմազանության պահպանում 4. Համայնքի կենսամիջավայրի ընդհանուր բարելավում 5. Տնտեսական և զբոսաշրջային ներուժի աճ
--	--

Երկարաժամկետ արդյունքներ ԷՍԳ (անկախ ժամանակահատվածից՝ օրեր, շաբաթներ, ամիսներ)

1. Սրտային հիվանդությունների վաղ հայտնաբերում
2. Բուժման էֆեկտիվության գնահատում
3. Սրտի հիվանդությունների և ռիսկի գործոնների մոնիթորինգ
4. Նախորդ հիվանդությունների հետևանքների գնահատում

Համակարգիչների ներդրման արդյունքում երկարաժամկետ արդյունքները՝

1. Բուժման որակի էական բարելավում
2. Առողջապահական համակարգի ինտեգրում և համահարթեցում
3. Հիվանդությունների կանխարգելում և վաղ հայտնաբերում
4. Կառավարման և ռեսուրսների արդյունավետ օգտագործում
5. Նորարարության և հետազոտությունների խթանում

Ներարկիչի ինֆուզմատի երկարաժամկետ արդյունքները

1. Բուժման որակի բարձրացում
2. Հիվանդների անվտանգության մակարդակի բարձրացում
3. Բուժանձնակազմի մասնագիտական զարգացման խթանում

		4. Արդյունավետության բարձրացում համակարգում 5. Առողջապահական համակարգի թվայնացում 6. Նորարար բժշկության զարգացում Մեզի անալիզատորի երկարաժամկետ արդյունքները 1. Լաբորատորիայի ընդհանուր արդյունավետության կայուն աճ 2. Բուժման որակի և պացիենտի անվտանգության բարձրացում 3. Ծախսարդյունավետության բարձրացում և ռեսուրսների օպտիմալ կառավարում 4. Տվյալների կենտրոնացված համակարգում և վերլուծություն 5. Արդյունավետ մասնակցություն բնակչության առողջության պահպանման պետական ծրագրերին 6. Լաբորատոր ծառայությունների հեղինակության և վստահության բարձրացում
9.	Ծրագրի տևողությունը	2026 թվականի փետրվարի 1-ից 2026 թվականի հունիսի 30-ը
10.	Իրականացման վայրը	Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, քաղաք Աբովյան
11.	Բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով նախատեսվող սուբվենցիաների համար հաշվարկված գումար	9 641 000 դրամ, որից՝ Կելրեյթերիա հուրանավոր -7 401 000 դրամ EKG 1212T Էլեկտրասրտագրական սարք – 1 160 000 դրամ Համակարգիչ – 300 000 դրամ Ներարկիչ ինֆուզատոր HF – 610 – 280 000 դրամ Մեզի անալիզատոր -500 000 դրամ

12.	Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	6 949 000 դրամ
13.	Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝	Ծրագրի ընդհանուր բյուջեն 16 590 000 դրամ, որից՝ Կելրեյթերիա հուրանավոր - 12 600 000 դրամ Ակացիա ծառատեսակներ – 1 750 000 դրամ 2 EKG 1212T Էլեկտրասրտագրական սարք – 1 160 000 դրամ Համակարգիչ – 300 000 դրամ Ներարկիչ ինֆուզատոր HF – 610 – 280 000 դրամ Մեզի անալիզատոր -500 000 դրամ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ